

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՄԻ ՈՒՇԱՑԱԾ ԵՎ ՄԻՏՈՒՄՆԱՎՈՐ ԳՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Պրոֆ. Կ. Գ. ՂԱՅԱԴԱՐՅԱՆ

Ավելի քան 30 տարի առաջ մեծ ջանքերի գնով լույս տեսավ Թ. Թորամանյանի աշխատությունների մեր կազմած առաջին ժողովածուն ակադեմիկոս Հովսեփ Օրբելու խմբագրությամբ: Հրատարակությունից առաջ այն քննարկվեց և հավանության արժանացավ հատուկ հանձնաժողովի կողմից, որի կազմի մեջ էին պատմաբան Մ. Ներսիսյանը (նախագահ), արվեստագետ Գ. Լեվոնյանը, ճարտարապետներ Ս. Սաֆարյանը, Վ. Հարությունյանը, Կ. Հովհաննիսյանը և Գ. Մուշեղյանը:

Մեր ստեղծագործական կյանքի լավագույն շրջանի ավելի քան հինգ տարիները նվիրելով ականավոր գիտնականի ժողովածուները կազմելու աշխատանքին, մենք նպատակ ենք ունեցել հնարավորին չափ անթերի և ամբողջական ձևով ներկայացնել Թորամանյանի ժառանգությունը: Մեր գործը գնահատվեց ըստ արժանվույն. գիրքը բացառիկ ընդունելություն գտավ հասարակության կողմից, մամուլում հրապարակվեցին դրական գրախոսականներ և քաջալերական հոդվածներ:

Թորամանյանը իր կենդանության օրով կարողացել էր տպագրել երեք փոքրիկ գրքույկ և մի երկու տասնյակ հոդված, այն էլ մեծ մասամբ լրագրերում: Ուստի կարելի է պնդել, որ եթե Արևմտյան Եվրոպայում մեծ գիտնականը հայտնի դարձավ Հ. Ստրիգովսկու ուսումնասիրության¹ շնորհիվ, ապա Հայաստանում նա լայն մասսայականություն գտավ հայերեն հրատարակված այդ երկու հատորներով²:

Եվ ահա տասնյակ տարիներ անց Թ. Թորամանյանի երկու ժառանգները, մեկը ուսուցչուհու վկայականով (Ն. Թորամանյան), մյուսը պրակտիկ ճարտարապետ, Հայաստանի արխիվների վարչության «Բանբերում» տպագրում են մի հոդված³, նպատակ ունենալով սև բիծ դնել նշված ժողովածուների վրա:

Ինչ խոսք, այնպիսի մի ծանր աշխատանքի մեջ, ինչպիսին Թորամանյանը,

¹ J. Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918.

² Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության. աշխատությունների ժողովածու, կազմեց և հրատարակության պատրաստեց ավագ գիտ. աշխատող Կարո Ղաֆադարյան, ընդհանուր խմբագրությամբ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու, Երևան, 1942, XXXV+403 էջ: Նույնի՝ Նյութեր հայկական ճարտարապետության պատմության. աշխատությունների Լրկրորդ ժողովածու, կազմեց և խմբագրեց Կ. Ղաֆադարյան, աշխատակցությամբ Ն. Թորամանյանի, Երևան, 1948, XIII+307 էջ (այսուհետև՝ Նյութեր):

³ Ն. Թ. Թորամանյան, Գ. Թ. Թորամանյան, Գիտության ականավոր գործիչների աշխատությունների բնագրերի հրապարակման հարցի շուրջը, «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1972, № 2, էջ 231—246:

յանի ժառանգության հրատարակությունն է, անխուսափելի են թերությունները և մասնակի սխալները: Սակայն խոսքը տեղին, ուղղամիտ և անաչառ գիտողությունների մասին չէ: Ժառանգները որոշել են ժխտել և վարկաբեկել ամեն ինչ:

Ժողովածուների մեջ սխալներ ցույց տալու նպատակով գրախոսողները հենվել են Թորամանյանի անհայտ, մեղ անծանոթ բնագրերի վրա. շատ անգամ նրանք իրենց տեղեկությունները բաղել են սևագիր և հրատարակության մեջ չօգտագործված ձևագրերից:

Թորամանյանի կենդանության օրով հրատարակված գործերը մենք ժողովածուի մեջ զետեղել ենք տպագրվածից, բանի որ դրանք վերջնական մշակման են ենթարկվել հեղինակի կողմից: Ժառանգները աղբյուրն են չեն իմացել և հեղինակի տպագրածներից մեր արտատպությունները համեմատել են անմշակ ձևագրերի հետ ու...բազմաթիվ տարբերություններ են գտել: Այսպիսով նրանք հակասության մեջ են մտել ոչ թե մեզ հետ, այլ իրեն՝ Թորամանյանի հետ:

Սակայն անցնենք մեղադրանքներին:

Մեզ մեղադրում են, որ Թորամանյանի այս կամ այն աշխատանքը չենք զետեղել ժողովածուների մեջ:

Մի՞թե դժվար էր հասկանալ, որ աշխատությունների լիակատար ժողովածու չի հրատարակված: Մենք նպատակ էլ չենք ունեցել ամեն ինչ տպագրել, մանավանդ որ Թորամանյանն ունի միևնույն նյութին վերաբերող տարբեր ուսումնասիրություններ, հին աշխատությունների վերամշակումներ և երբեմն էլ անտիպ գործեր, որոնց մեջ արծարծված խնդիրները և՛ 40-ական թթ., և՛ այսօր այլ կերպ են լուսարանվում, հետևապես այդպիսի գործերի տպագրությունը նպատակահարմար չէր: Ճարտարապետի գործերից հրատարակվել է այն ամենը, ինչը նպատակահարմար է համարվել:

Նախապես որոշված էր Թորամանյանի աշխատությունները հրատարակել երկու հատորով, որոնցից առաջինը պետք է ընդգրկեր նրա ընտիր աշխատությունները և ունենար 20 հեղինակային մամուլ ծավալ, իսկ երկրորդը նվիրված էր լինելու հեղինակի կատարած չափազորություններին: Դործը հրատարակության պատրաստելու ընթացքում առաջին հատորի ծավալը հասավ 50 մամուլի, որի տպագրությունը պատերազմի ծանր տարիներին գլուխ եկավ մեծ դժվարությամբ: Առաջին ժողովածուի ունեցած բացառիկ ընդունելությունը պատճառ եղավ, որպեսզի դուրս մնացած նյութերի հիման վրա, չափազորությունների հատորից անկախ, լրացուցիչ մի հատոր ևս տպագրվի, որ նախապես հաշվի չէր առնված: Դրա համար էլ թեև յուրաքանչյուր հատորի ներսում նյութերը ըստ իրենց բովանդակության էին դասավորված, բնականաբար որոշ կրկնություններ և անկանոնություններ պետք է լինեին:

Կան նաև աշխատություններ, որոնք, անկախ հրատարակվող հատորների ծավալից, գիտակցաբար դուրս ենք թողել: Այդպես է, օրինակ, «Զվարթնոց» մենագրության համար գրված «Քաղաքական կացությունը V—VII դարերում» հոդվածը: Դա չենք տպագրել, որովհետև մեր պատմադրությունը V—VII դարերի քաղաքական պատմությունը բոլորովին այլ կերպ է լուսաբանում:

Քննադատները գրում են, որ «Զվարթնոցը գեղարվեստի պատմության մեջ» գլուխը զետեղել ենք Բ հատորում առանց ծանոթագրության: «Զվարթ-

նոցը գեղարվեստի պատմության մեջ» մենագրության գլուխ չէ, այլ բոլորովին անկախ մի աշխատություն, ընդարձակ ներածական մասով: Ինչպես արդեն ասել ենք, երբ տպագրում էինք առաջին ժողովածուն, Բ ժողովածուի մասին խոսք չկար, այդ պատճառով այս հոդվածը, ինչպես և մի շարք այլ աշխատություններ, դուրս էին մնացել Ա ժողովածուից և զետեղվեցին Բ ժողովածուի մեջ:

Այդ մասին գրել ենք Բ ժողովածուի «խմբագրի կողմից» առաջաբանի մեջ⁴: Գրախոսելուց առաջ պետք էր գոնե գիրքը լրիվ կարդալ:

Առաջին ժողովածուի սկզբում «Հայաստանի նախնական ճարտարապետական մնացորդները» վերնագրի տակ տպագրել ենք հեղինակի ընդարձակ, բայց անավարտ և անվերնագիր մի ուսումնասիրությունը, որի մեջ նա նկարագրել է Հայաստանում իր տեսած կիկլոպյան հուշարձանները: Այդ աշխատությունն ընդարձակ շարադրությունն է էջմիածնի գիտական ինստիտուտի «Բանբերում» լույս տեսած հոդվածի:

Գրախոսականի հեղինակները մեզ մեղադրում են, որ վերոհիշյալ հոդվածից հանել ենք որոշ նախադասություններ և կատարել ենք «անտեղի» կրճատումներ: Իբրև օրինակ մեջ են բերել Թորամանյանի՝ մեզ անհայտ ձեռագրերից երկու քաղվածք: Դրանցից մեկի մեջ հեղինակի այն խոսքերն են, որ Հայաստանի հնագույն ճարտարապետական հուշարձանները իրենից առաջ ոչ ոք չի ուսումնասիրել և «նույնիսկ անոնց գոյությունն անգամ գրեթե գիտության անժանոթ մնացած է»: Քննադատների կարծիքով այս նախադասությունը կըրճատելով մենք Թորամանյանին ղրկել ենք Հայաստանի նախնադարյան հուշարձանները հայտնաբերելու առաջնության պատվից (էջ 233):

Արժանին հատուցելով Թորամանյանին, չպետք է մոռանալ, որ Հայաստանի հնագույն հուշարձանների մասին դեռևս XIX դարից սկսած հոգվածներ և գրքեր են լույս տեսել⁵: Աններելի է, երբ Թորամանյանի ժառանգները, առանց նյութին ծանոթ լինելու, դատավճիռ են արձակում:

Նույն հոդվածի վերաբերյալ ժառանգները գիտողություն են արել, որ մենք դուրս ենք հանել «թերևս ավելի բարձրագույն դասակարգի հիշատակի համար» միտքը և ավելացրել են, որ մեր խմբագրելուց հետո «վերացվել են նաև Թորամանյանի կարծիքը ցեղապետի և ստրուկի դամբարանների շարի ու ձևի միջև եղած տարբերության մասին, հակասելով միաժամանակ պատմական իրողությանը» (էջ 236):

«Քննադատ» ժառանգները այստեղ արդեն կատարյալ մոլորության մեջ են: Ցեղապետին բարձրագույն դասակարգ և համայնրի անդամին ստրուկ անվանելը նշանակում է հասկացողություն չունենալ նախնադարի մասին: Թող իմանան, ուրեմն, որ նախնադարում դասակարգեր գոյություն չեն ունեցել, ո՛չ բարձր, և ո՛չ էլ ցածր, իսկ ստրուկների գոյության շրջանում ստրուկները դամբարաններ չեն ունեցել, ո՛չ մեծ, և ո՛չ էլ փոքր: Ստրուկները տոհմատիրական կարգերի քայքայման ժամանակամիջոցում համարվել են իրենց տիրոջ սեփականությունը և նրանց հաճախ թաղել են տիրոջ գերեզմանի մեջ:

⁴ Թ. Թորամանյան, Նյութեր, Ա, էջ VIII (հայերեն) և էջ XII (ռուսերեն):

⁵ Տե՛ս Ե. Լալայան, Ղոշուն Դաշ, «Ազգագրական հանդես», Գ դիրք, 1898, էջ 174, ինչպես նաև Աշխ. Քալանթարի, Ժակ դը Մորգանի, Աս. Խաչատրյանի մի շարք աշխատությունները:

Ժառանգները վշտացած են մեր այն հայտարարությունից, որ մեր ակա-
նավոր ճարտարապետն ունեցել է հնացած տեսակետներ, որոնք, սակայն,
մենք փոփոխության չենք ենթարկել և նույնությամբ տպագրել ենք, որպեսզի
նա գիտության մեջ հանդես գա այնպես, ինչպես եղել է⁶:

Այդ հայտարարությունն անելու ժամանակ նկատի ենք ունեցել գիտու-
թյան միջից իսպառ վերացած և անընդունելի որոշ բնորոշումները: Իրանցից
են, օրինակ, պատմությունը նախապատմական և պատմական դարաշրջան-
ների բաժանելը, կամ մշակույթը քրիստոնեականի և նախաքրիստոնեականի
տրոհելը, VII դարը ոսկեդար համարելը և այլն: Ինչպե՞ս կարող էինք, օրի-
նակ, հնացած շհամարել Թորամանյանի՝ հայ ժողովրդի պատմության ընդհա-
նուր բնույթի հետևյալ բնորոշումը. «Հայոց պատմությունը աշխարհական և
քաղաքական ավելի եկեղեցական ըլլալուն բնական պատճառներ շատ կան»:

Ժառանգները գրում են, որ հրատարակությունից դուրս ենք թողել Թորա-
մանյանի հետևյալ նախադասությունը. «Պետք է ըսեմ, որ իմ արձանագրած-
ներս նախաքրիստոնեական բաղմաթիվ մնացորդներից, միայն նմուշի ար-
ժեք ունին. միմիայն իմ հետազոտումով և ցուցակագրումով չի կարող լրիվ
լինել ներկա Հայաստանի սահմանների մեջ գտնված նախաքրիստոնեական
մնացորդները, դեռ անթիվ հիշատակարաններ⁸ կան, որոնք միանգամայն
զուրկ են հետազոտական ալյուրություններե...» (էջ 232):

Ժառանգներն այդ «կրճատումից», որ չենք կատարել, ժանր հետեություն-
ներ են անում և նշում, որ ժողովածուների մեջ իբր տեղ են գտել այդպիսի
բաղմաթիվ կրճատումներ, որով աղավաղվել են հեղինակի մտքերը:

Տարօրինակ կերպով նրանք մեր տպագրածի համապատասխան տեղում
չեն տեսել նույնիմաստ հետևյալ տողերը. «Վերոգրյալ ցանկը (խոսքը Հայաս-
տանի հնագույն 27 հուշարձաններին է վերաբերում—Կ. Ղ.) միմիայն պատ-
մական Այրարատյան նահանգի մեջ գտնվածների ցուցակն է, այն էլ ոչ լրիվ:
Բավական թիվ կկազմեն նախնադարյան այն ավերակները, որոնք ես չեմ տե-
սած և չեմ կարող անոնց մասին որևէ կարծիք հայտնել: Բսկ եթե ամբողջ
Հայաստանը խուղարկենք, դուցե իմ տված ցուցակի տասնապատիկն ավելի
ավերակներ գտնենք, քան ինչ որ ես տեսել եմ»:

Հասկանալի է, որ այս տպագրվածը մեջբերած սեագրության մշակված
և լրացված տարբերակն է՝ կատարված Թորամանյանի ձեռքով, և ժառանգնե-
րը, ինչպես ամենուրեք, այնպես էլ այստեղ, մեր տպագրածը անմշակ ձե-
ռագրի հետ են համեմատել:

Գրախոսության հեղինակները ժողովածուներում հրատարակված ոչ միայն
տողեր ու մտքեր, այլև ամբողջ հոդվածներ և նրանց վերաբերող վերնագրեր
համարել են կրճատված կամ անտիպ մնացած: Նրանք գրում են. «Նույնքան
անբացատրելի կերպով ժողովածուում տեղ չի տրվել այդ նույն աշխատու-
թյան «Ճարտարապետության ծագումը» ենթաբաժնին, որտեղ Թորամանյանը
նկարագրում է մարդկային առաջին բնակարանները, նրանց կառուցման մի-

6 Թ. Թորամանյան, Նյութեր, Ա, էջ X (հայերեն), էջ XII (ռուսերեն), Բ, էջ IX (հա-
յերեն), էջ XIII (ռուսերեն):

7 Թ. Թորամանյան, Նյութեր, Ա, էջ 57:

8 Այսինքն՝ հուշարձաններ («Բանբեր», էջ 232, ծան.):

9 Թ. Թորամանյան, Նյութեր, Ա, էջ 13:

ջոցները, օգտագործված շինանյութը և այն պատկերավորում գրականություններից վերցված նկարներով» (էջ 233)։

Այդ «բացակա» հոդվածը նույն վերնագրով, գրականությունից փաղված նկարներով և մի փանի հավելվածներով, որոնք վերցրել ենք տարբեր սևագիր ձեռագրերից, տպագրել ենք Բ ժողովածուի սկզբում, այսինքն գրքի այն մասում, որտեղ կենտրոնացրել ենք հեղինակի ընդհանուր բնույթի հոդվածները։ Էջատակի ծանոթության մեջ էլ գրել ենք. «Այս հատվածը տպագրում ենք հեղինակի անտիպ աշխատությունից, որին կցել ենք նաև այլ անավարտ աշխատությունների մասեր»¹⁰։

Մեզ անհասկանալի է, թե ինչպե՞ս կարելի է այս աստիճան անպատասխանատու հայտարարություններ անել և իր իսկ վերնագրով տպագրված հոդվածը հայտարարել անտիպ մնացած։

Քննադատները գրում են, որ այսպես կոչված նախաքրիստոնեական շրջանի հուշարձանները դրել ենք «Քրիստոնեական դարաշրջանի սկզբներին շինված հուշարձաններ» ենթագլխի ներքո։ Այս վերնագիրն առիթ է տվել գրախոսներին ենթադրելու, որ հեթանոսական հուշարձանները շփոթել ենք քրիստոնեականների հետ (էջ 235)։

Գրախոսները այստեղ պարզապես մոռացել են, որ հայերը քրիստոնեություն են ընդունել ոչ թե քրիստոնեական դարաշրջանի սկզբին, այլ երեք դար հետո, հետևապես քրիստոնեական դարաշրջանի սկզբները՝ առաջին, երկրորդ դարերը և երրորդն էլ ամբողջությամբ, հայերի համար հեթանոսական ժամանակաշրջան են և այդ դարերում կառուցված տաճարները քրիստոնեական չեն։ Այդ մասին Թորամանյանն ինքը գրել է. «Նախաքրիստոնեական շրջանի ճարտարապետական ոճը շարունակվել է մի ժամանակ նաև քրիստոնեական թվականի սկիզբներում»¹¹։

Հոդվածի հեղինակների ասելով, շփոթելով դոմեններն ու կրոմլեխները, Բ ժողովածուի 222 էջում դոմենները կրոմլեխ ենք դարձրել 4 անգամ (էջ 243)։ Եվ ահա, զույգ «ուսուցիչները» մեզ «սովորեցնում են», թե ի՞նչ է դոմենը և ի՞նչ է կրոմլեխը։ Թող հայտնի լինի նրանց, որ դոմենը չորս պատերով արկղաձև կառուցվածք է, իսկ կրոմլեխը՝ բոլորշի քարե շինություն։ Թորամանյանը ամեն անգամ շեշտել է կրոմլեխների բոլորակ լինելը։ Ուրեմն այդ էջում կրոմլեխի և դոմենի շփոթություն չկա։ Շփոթություն կա մեր քննադատների գիտելիքների մեջ։

Մեզ մեղադրում են, որ Զվարթնոցի վերաբերյալ Թորամանյանի մենագրական աշխատությունը լրիվ չենք ներկայացրել (էջ 237)։ Սակայն ինչպե՞ս կարող էինք հեղինակի անավարտ գործը ամբողջական ներկայացնել։ Թորամանյանի այս երկի մեջ առաջին հերթին բացակայում է ամենագլխավորը՝ Զվարթնոցի վերակազմության նախագծի հիմնավորումը։ Այդ է պատճառը, որ Զվարթնոցի հորինվածքի վերաբերյալ համապատասխան տեղում տեղագրել ենք «Մուրճ» ամսագրի 1905 թ. համարներից մեկում լույս տեսած նրա հոդվածը, որը, ինչքան մեզ հայտնի է, Թորամանյանի՝ հայկական ճարտարապետության հարցերին նվիրված առաջին գործն է։ Վերոհիշյալ թերության հե-

10 Թ. Թորամանյան, Նյութեր, Բ, էջ 3։

11 Թ. Թորամանյան, Նյութեր, Ա, էջ 41։

տեանքն է, որ մինչև օրս մեղանում երբեմն-երբեմն հրապարակ են գալիս Թորամանյանի կատարած վերակազմությանը հակառակ նոր նախագծեր:

Դիտողություն է արված այն մասին, որ մասնատել ենք Թորամանյանի «Երևանի պետական պատմական թանգարանի ճարտարապետական բաժնի համառոտ հատկանշական ցուցակը» (էջ 237): Դիտողությունը ձիշտ է: Այդպես է ստացվել, որովհետև, ինչպես նշեցինք վերը, երբ հրատարակության էինք պատրաստում առաջին ժողովածուն, երկրորդի մասին խոսք չկար, այդ պատճառով ցուցակից վերցրեցինք միայն այն հուշարձանների նկարագրերը, որոնք տպագրվող այլ ուսումնասիրությունների մեջ չկային, իսկ երկրորդ ժողովածուի մեջ հնարավոր եղավ մնացածները ևս ղեկեղել, համառոտակի նկարագրվող այլ հուշարձանների շարքում: Այդ առթիվ հատուկ նշումներ ենք արել Ա. և Բ ժողովածուների առաջաբաններում: Գրախոսները պարտավոր էին կարդալ այդ նշումները:

Մի ինչ-որ անհայտ «բնագրից» օգտվելով, նրանք բազմաթիվ տարբերություններ են գտել մեր հրատարակածի և միայն իրենց հայտնի բնագրի միջև և ըստ այնմ արել են մի շարք դիտողություններ, որոնց մենք կանդադառնանք ստորև:

Կրի (կրաշաղախի) գործածության սկզբնավորության մասին, ըստ նրանց, իբրև թև կրճատել ենք միայն մի գիր և, ինչպես ասված է գրախոսականում, «ստացվել է, որ կրի գործածությունը Հայաստանում ընդհանրացել է ոչ թև «ն. ք.», այսինքն՝ նախքան քրիստոնեությունը, այլ՝ մեր թվականության II կամ III դարերում» (էջ 238):

Բաց ենք անում Թորամանյանի ձևորով հրատարակած գրքուկը, որից արտատպել ենք այդ աշխատանքը. այնտեղ էլ ճիշտ այնպես է, ինչպես մենք ԽճԻ տպագրել. առանց Ն. Բ.-ի Այդտեղ Ն. ք. չէր էլ կարող լինել, որովհետև կիրը շինարարության մեջ մեր թվականությունից առաջ գործածության մեջ չի եղել: Օրինակ՝ Գառնիի տաճարը, որ կառուցված է I դարում, առանց կրաշաղախի է:

Գրախոսները այն կարծիքին են, որ մենք խեղաթյուրել ենք հեղինակի գրած տեղանունները. Ա ժողովածուի 85-րդ էջում Դովրիի փոխարեն գրել ենք Դովին (էջ 241):

Նշված էջում Թորամանյանը խոսում է բազալտի մեծազանգված քարերով կառուցված մասնավոր շենքերի մասին և ավելացնում. «Այս մնացորդները կարելի է տեսնել Արմավիրում, Արտաշատի տեղում, Դվինում, Նույնիսկ Անիում»: Անիի, Արտաշատի և Արմավիրի կողքին, հասկանալի է, որ պետք է լինի Դվինը և ոչ թե Դովրի գյուղը, որտեղ բացի կիկլոպյան մի ամրոցից ոչ մի այլ շենք չկա, ո՛չ մասնավոր, և ո՛չ էլ հասարակական:

Ժառանգները մեզ «սովորեցնում» են, որ հայկական հուշարձանները հաճախ կոչվում են իրենց գտնված վայրի անունով, և մենք, հին և օտար անունները նորերով փոխելու ժամանակ, Բաշ Շորագյալը շփոթել ենք Բաշ Ապարանի հետ, Շիրակավանը դարձրել ենք Քասախ (էջ 241):

Եթե նրանք այդ հատվածը ուշադիր կարդային, կտեսնեին, որ խոսքը Զվարթնոցի վերին՝ շրջանաձև սրահը տանող աստիճաններին է վերաբերում, որոնց տեղն այժմ անհայտ է: Այդ էջում Թորամանյանը ծրագիր է կազմել զուգահեռ նյութերի հիման վրա աստիճաններն ուսումնասիրելու վերաբերյալ և ի միջի այլոց գրել է. «Սանդուղներու տեսակետով ի նկատի ունենալ Քա-

սախի եկեղեցիին սանդուղը»։ Աստիճանները ներսում են եղել, թե դրսում։ Դրսից աստիճաններ ունի Քասախի բազիլիկը, բայց ոչ Շիրակավանը։

Մի այլ մեղադրանք. «Բայց թե ինչո՞ւ է Հանի Պայրամը դարձել Բախ-շալար, այդ արդեն բոլորովին անհասկանալի է» (էջ 241, ընդգծումները մերն են—Կ. Ղ.)։ Ստիպված եմ քննադատներին տեղեկացնել, որ այժմ Հանի Պայրամ անունով գյուղ չկա։ Նրա նոր անունը Բաղշալար է։ Երկու անուններն էլ դրել ենք իրար կողքի, որպեսզի ընթերցողները գիտենան, որ Հանի Պայրամն այժմյան Բաղշալարն է։

Ժառանգները գրում են. «Այնտեղ, ուր Թորամանյանը խոսում է հայկական ճարտարապետության մեջ *arg sur hausse* (դեպի վեր բեկված կատարներով) կամարների ոճի կիրառման ժամանակների մասին, ժողովածուում մեկ էջի վրա երկու տեղ փոխարինված է միանգամայն հակառակ ձևի՝ *arg, sur baisse* կամարներով» և ցույց են տվել ժողովածուի Ա հատորի 235 էջը (էջ 241)։

Ճիշտ է, այդ էջում կան ճարտարապետական մասերի ֆրանսերեն անուններ, որոնց մենք ձեռք չենք տվել և նույնությամբ տպագրել ենք։ Եթե իրոք *arg sur hausse*-ի փոխարեն տպագրվել է *arc sur haissé*, ապա սխալը պետք է որոնել Թորամանյանի ձեռագրի մեջ, որովհետև ֆրանսերենով բարձր ցածրի կամ հակառակը փոխելու համար ինչ-որ հիմք պետք է ունենալ։ Մենք այդ հիմքը չենք ունեցել։ Այդ կարող էր անել մեքենագրածը ձեռագրի հետ համեմատողը, այժմ մեր քննադատներից մեկը՝ Ն. Թորամանյանը։

Մեզ մեղադրում են, որ արևելադրությունը դարձրել ենք արևելադիր լինել (էջ 241)։ Իմաստների մեջ ինչ-որ նրբին տարբերություններ են գտնում, թեև երկուսն էլ նույնիմաստ են և Թորամանյանի վերամշակման արդյունք։

Խոսքն այստեղ վերաբերում է Գառնիի տաճարին, և եթե զրախոսները ուզում են ճշմարտությունն իմանալ, այդ հարցում Թորամանյանն ինքն է սխալ, որովհետև Գառնիի տաճարը աշխարհիկ պալատական շենք է համարում (հովանոց) և նույնիսկ այն կարծիքին է, որ շենքի ավերակներում պահպանվել են զարդաքանդակ շրջանակավոր լուսամուտներ, որոնք իրականում, ինչպես հաստատում են բոլոր ուսումնասիրողները, գոյություն չունեն։

Իբր Ա ժողովածուի 142 էջում մի տեղ և շաղկապը կրճատել ենք, «որով խեղաթյուրվել է թե՛ իրականությունը, և թե՛ այդ դարերի շինությունները տանիքավորելու տարբեր միջոցների կիրառության մասին Թորամանյանի վերոհիշյալ տեսակետը» (էջ 239)։

Ստիպված ենք բերել «Բանբերում» և Թորամանյանի՝ իր կողմից հրատարակած «Շինանյութերն ու նրանց գործածության կերպը հին Հայաստանում» գրքույկում տպագրված համապատասխան հատվածները, ցույց տալու համար այն պահանջկոտ խմբագրումը, որ կատարել է Թորամանյանը 1932 թ. իր ձեռագիրը հրատարակման հանձնելու ժամանակ և որը լրիվ անտեսում են նրա ժառանգները դրանից 40 տարի հետո. «V—VII դարերու հատկանիշ ունեցող շենքեր, որոնք հասել են մինչև մեր օրերը, և ոչ մի հետք չունեն կամարածածկ եղած լինելու, անկասկած է, որ փայտով ծածկված էին» (էջ 239)։ «V—VII դարերի հատկանիշ ունեցող շենքերը, որոնք հասել են մինչև մեր օրերը, կամարածածկ լինելու ոչ մի հետք չունեն, ուրեմն անկասկած է, որ

նրանք փայտով են ծածկված եղել»¹²։ Իսկապես որ կոմենտարներն ավելորդ են։ Ինչպես տեսնում ենք համապատասխան տեղում այդ, չգիտես որտեղից հայտնագործած և-ը չկա և չէր էլ կարող լինել։

Հոգվածի հեղինակները երկու ժողովածուներից քաղել են 80-ի չափ բառեր և արտահայտություններ, որոնք իբրև թե փոփոխության ենթ ենթարկել և դրանով աղավաղել հեղինակի մտքերը (էջ 240—244)։ Ընթերցողին ձանձրացրած կլինեինք այդ «փոփոխություններից» ամեն մեկի մասին առանձին խոսելով, ուստի անդրադառնանք դրանցից մի քանիսին։

— Մեզ մեղադրում են, որ մեզում են բառերը իբր դարձրել ենք միացում են։ Խոսքը հայ ճարտարապետության III վերելքի մասին է։ Թորամանյանը գրում է, որ X դարում արդեն գոյություն ունեին այդ վերելքին հատուկ բազմաթիվ հուշարձաններ, բայց նրանցից մի քանիսը (թվարկում է անունները) այդ վերելքի նախօրեին փորձնական շինություններ են հանդիսացել, որոնք թեև շինարարական ամեն կատարելություն ունեն, սակայն ուձերի մեջ միացնում են արևելյան և արևմտյան ձևերը։ Եթե այստեղ մեզում և՛ բառը դնենք, կստացվի, որ շենքերից մի քանիսը կառուցվել են արևելյան և մի քանիսն էլ՝ արևմտյան ոճով, որոնք իրար հետ մրցել են։ Միացնում են-ը Թորամանյանի բառն է և ձիշտ է արտահայտում իմաստը։

— Սրբագործվածը իբրև թե դարձրել ենք օգտագործված։ Թեև այդ հոգվածը ձեռագրից ենք տպագրել, հետևապես ձեռքի տակ բնագիր չունենք, բայց մեջ կբերենք նախադասությունը և պարզ կլինի, որ այստեղ սրբագործված բառը տեղ չունի. «Հայաստանի մեջ հայոց մեհենական շենքերն օգտագործված են իբրև բրիտոնեական եկեղեցիներ»¹³։

— Որ շաղախի վերաբերյալ հաստատություն բառը դարձրել ենք հաստություն¹⁴։ Իր տպագրած գրքույկում Թորամանյանն ինքը համապատասխան տեղում գրում է հաստություն։ Ուրեմն, եթե դա սխալ է, ապա մերը չէ, այլ Թորամանյանինը¹⁵։

— Իբրև թե գիտական բառը դարձրել ենք տևական։ Եթե ժառանգները նեղություն կրեին և զոնե այս անգամ բաց անեին Թորամանյանի ձեռքով տպա-

12 Թ. Թորամանյան, Շինանյութերն ու նրանց գործածության կերպը հին Հայաստանում, Երևան, 1932, էջ 30 (այսուհետև՝ Շինանյութեր)։

13 Թ. Թորամանյան, Նյութեր, Ա, էջ 30։

14 Ջարսանալի է, որ ժառանգները թեև գոյություն չունեցող Բ գրի բացակայությունը սկստել են, բայց այդ նույն աշխատության մեջ մեր կատարած անվիճելի ուղղումները չեն տեսել։ Այսպես, գրքույկի 14 էջում Թորամանյանը գրել է. «Պատի երկու երեսին միմյանց վրա շարված քարերը, երբեմն ճակատի ծավալով շատ մեծ են, բայց շատ քիչ խորություն ունեն»։ Բոլորին հայտնի է, որ քարի ճակատը ծավալ չի ունենում, այլ մակերես, ուստի այդ բառը փոխեցինք մակերեսի (ընդգծումները մերն են — Կ. Ղ.)։ Նույն աշխատության մի շարք տեղերում պատերի և քարերի չափերը սխալ էին գրված. փոխանակ մետրի, հեղինակը գրել էր սանտիմետր։ Շրինակ. «Մեր թվականի սկզբից մինչև XII դարի վերջը մեծ շինությունների պատերն առհասարակ 0,90 սանտիմից մինչև 1,05 սանտ. հաստություն ունեն», կամ՝ «քարերի միջին հաստությունը հաշվելով 0,20 սանտ.» և այլն։ Բոլորը գիտեն, որ երկու միլիմետր հաստության շինարարական քարեր չեն եղել միջնադարում, ուստի և անաղմուկ կերպով, իբրև անվիճելի վրիպակներ, դրանք ուղղել ենք արտատպության ժամանակ։

15 Հմմտ. Թ. Թորամանյան, Նյութեր, Ա, էջ 138, ա սյունակ, վերջին տողը և Թ. Թորամանյան, Շինանյութեր, էջ 17, տող 9։

գրած գրքույկը, ապա կտեսնեին, որ համապատասխան տեղում գրված է... ըստ տեղական փորձերի հաստատված է...»¹⁶։

— Որ իբր Ա ժողովածուի 364 էջում արևելյան բառը դարձրել ենք արևմտյան։ Այստեղ խոսքն Անիի կաթողիկե եկեղեցու արևմտյան մուտքի մասին է։ Գրիչ վերցնելուց առաջ ժառանգները պետք է գիտենային, որ Անիի կաթողիկեն արևելյան մուտք չունի։ Հայոց եկեղեցիներն ընդհանրապես արևելյան մուտք չեն ունենում։

— Իբրև թե մենք հաճախությունը դարձրել ենք հմտություն։ Այդ դիտողությունը ևս Թորամանյանին չհասկանալու հետևանք է։ Բերենք նախադասությունը և պարզ կդառնա, որ այստեղ հաճախություն բառը տեղ չունի. «Քանդակներուն մեջ ցույց տվեր է արվեստագետն իր զարդագիտական ճյուղին մեջ ունեցած մեծ հմտությունը»։ Հասկանալի է, որ արվեստագետը քանդակների մեջ իր հմտությունն է ցույց տվել և ոչ թե հաճախությունը։

— Իբրև թե չհասկանալով, դրսի հետ հաղորդակցող բառերը մենք փոխել ենք ներսի հետ հաղորդակցող-ի։ Այստեղ ևս ժառանգները չեն հասկացել իրենց հոր՝ Թորոս Թորամանյանի միտքը։ Թորամանյանն այն տեսակետին է, որ եկեղեցու արևմտյան կողմի ավանդատները, որոնք դրսից մուտք են ունեցել, եկեղեցու հետ կապված են եղել նաև ներսի կողմից։

Հավանաբար ճիշտ են քննադատ ժառանգներն այն բանում, որ Բ ժողովածուի 202 էջում (ա սյունակ, տող 8 ն.) զրեթե բառը վրիպակով տպագրվել է զմբեթը (էջ 244)։ Սակայն նրանք այստեղ «մոռացել» են մի կարևոր հանգամանք. այն, որ Բ ժողովածուի բոլոր նյութերը Թորամանյանի ձեռագրերից մեքենագրել է տվել և տպագրության ընթացքում սրբագրական աշխատանքներին մասնակցել է քննադատ ժառանգներից մեկը՝ Ն. Թորամանյանը իբրև այդ ժողովածուի կազմողի և խմբագրողի պաշտոնական աշխատակից և այդ նկատառումով նրա անունը հիշատակված է ոչ միայն խմբագրի կողմից գրված առաջաբանում (էջ IX և XIII—հայերեն և ռուսերեն), այլև ժողովածուի տիտղոսաթերթերի վրա, դարձյալ հայերեն և ռուսերեն։ Այդ պատճառով Ն. Թորամանյանն ավելի ճիշտ վարված կլիներ, եթե վերոհիշյալ վրիպակի համար որոշ պատասխանատվություն վերցներ իր վրա։

Այս բացատրություններն էլ բավական են ցույց տալու համար, որ ժառանգները մեղանշել են ճշմարտության դեմ նաև բառացուցակի հարցում։

Քննադատները գրում են, որ երկու ժողովածուներում զետեղված նկարների մակագրությունների մեջ տեղ գտած բազմաթիվ սխալներից «գեթ երկու տասնյակը» վրիպակների մեջ չենք նշել (էջ 244 և 245)։

Նախկինում Թորամանյանի ձեռքով հրատարակված աշխատությունները (բացառությամբ «Տեկորի տաճարի») և նրա բոլոր անտիպ գործերը նկարներ գրեթե չեն ունեցել։ Ժողովածուները նկարներով օժտել ենք մենք, ըստ մեր հայեցողության։ Չենք ժխտում, որ երկու հատորների 541 նկարների մակագրություններում կարող են վրիպակներ լինել, բայց եթե քննադատները նկատել են դրանք, երկու տասնյակից պետք է նշեին «գեթ մի երկուսը»։

Գրախոսները Անի քաղաքի ծագումը կապում են հեթանոսական ժամանակների հետ (էջ 237), որ միանգամայն սխալ է։ Անի քաղաքը հիմնադրել

16 Թ. Թորամանյան, Շինանյութեր, էջ 21, տող 8 ն.։

են Բաղրատունիները, Կամսարականների միջնադարյան ամրոցի տեղում: Այսպիսի տարրական գիտելիքներ պետք է որ ունենային քննադատելու տենդով բռնված ժառանգները:

Մեզ մեղադրում են, որ իբրև թե աղավաղել ենք Թորամանյանի աշխատություններում Անիի Փրկիչ եկեղեցու, Հոռոմոսի ս. Հովհաննես եկեղեցու գավթի կառուցման թվականները և այլն, ցույց տալով Ա ժողովածուի 166 (երկու անգամ) և 309 էջերը (էջ 244):

Այստեղ ևս, մեզ մի կողմ թողած, պետք է պաշտպանենք Թորամանյանին՝ իր ժառանգների քննադատությունից: Այսպես.

Ա ժողովածուի 166 էջում, որ երկու անգամ նշել են քննադատները, Անիի Փրկիչ եկեղեցու կառուցումը դրված է 1036 թ. տակ, որ միանգամայն ճիշտ է: Այդ թվականը հաստատվում է եկեղեցու կառուցման արձանագրությամբ՝ ՆՁԾ (485+551=1036). ճշտությունը կարելի է ստուգել արձանագրության լուսանկարով, որ հրատարակել է Հովսեփ Օրբելին¹⁷:

Հոռոմոսի ս. Հովհաննես եկեղեցու գավթի կառուցման արձանագրության մեջ թվականը ոմանք կարդում են ՆՁԵ (485+551=1036), ոմանք էլ՝ ՆՁԷ (487+551=1038): Թորամանյանը, հետևելով Ներսես Սարգսյանին, ընդունել է 1036 թվականը¹⁸: Այստեղ ևս ոչ մի աղավաղում տեղի չի ունեցել: Քննադատները չեն կարողացել փաստականը տարբերել աղավաղումից:

Քննադատները մեզ մեղադրում են, որ վերնագրերն անսխստեմ են, որ հաճախ վերացրել ենք Թորամանյանի գրած վերնագիրը և դրա փոխարեն նոր վերնագիր ենք դրել (էջ 244): Ճշմարտությունն այն է, որ մենք վերնագիր ենք դրել միայն այն դեպքում, երբ հեղինակի գրվածքը եղել է անվերնագիր, իսկ մեր դրած վերնագրերը միջակ (ուղանկյուն) փակագծերի մեջ ենք առել և էջատակի ծանոթության մեջ էլ նշել ենք այդ մասին:

Քննադատ ժառանգները պատրաստ են նույնիսկ Թորամանյանի աշխատությունները վերագրել ուրիշներին, միայն թե կարողանան այդ առիթով մեղադրանք բարդել մեզ վրա:

Այսպես, նրանք հայտարարում են, որ Բ ժողովածուի 5—9 էջերում Թորամանյանի անունով տպագրել ենք Ֆրանսիացի Շուազիի գրած ճարտարապետության գրքի մի գլուխը, որի մեջ իբրև թե ոչ մի խոսք չկա հայկական ճարտարապետության մասին, որ Թորամանյանի անունով տպագրել ենք Ֆրանսիացի Շարլ Դիելի 1907 թ. Փարիզում կարդացած մի ղեկուցումը և այլն:

Մեղադրանքի հեղինակները ըստ երևույթին ուշադիր չեն կարդացել իրենց ցույց տված վերոհիշյալ էջերը և այդ պատճառով մոլորության մեջ են ընկել:

Ինչպես հայտնի է, Թ. Թորամանյանը դեռևս 1900-ական թթ. այն կարծիքին էր, որ Հայաստանի պատմական ճարտարապետությունը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ընդհանրապես ուսումնասիրել ճարտարապետության ծագումն ու նրա հետագա զարգացման փուլերը տարբեր երկրներում, մինչև քրիստոնեության սկիզբը: Այդ ուսումնասիրությունը պետք է լիներ իբրև ներածություն հայկական ճարտարապետության պատմության:

¹⁷ «Դիվան հայ վիմագրության», սրբակ 1, Անի քաղաք, կաղմեց 2. Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ 44, արձ. 126, լուսանկարը՝ 14-րդ տախտակի վրա:

¹⁸ Թ. Թորամանյան, Նյութեր, Ա, էջ 309:

Թորամանյանը դեռևս 1908 թ. այդ մասին գրել է. «Հայ ճարտարապետության ծագումը և դարերու հոսանքին մեջ անոր կրած փոփոխություններն ու զարգացումը հետազոտելն առաջ կարելի է ընդհանուր ակնարկ մը նետել քոյր կրոնական հաստատություններու հատակագծային բաժանումներու վրա սկսյալ պատմական ամենահին ժամանակներն մինչև մեր օրերը...»¹⁹։ Ժառանգների հիշատակած էջերում մենք ղետեղել ենք Թորամանյանի՝ հնագիտական տվյալների հիման վրա գրած «Ճարտարապետության ծագումը» վերնագիրն ունեցող մի հոդված, որի մեջ նա նախնադարյան ճարտարապետությունը բաժանում է իրար հաջորդող երեք փուլերի՝ նախասառցային, սառցային և սառցայինին հաջորդող դարաշրջանի։

Այդ հոդվածի վերջում Թորամանյանը գրում է, որ «նախնադարի հողի վրա, կամաց կամաց առաջ եկան երկու մեծ ճարտարապետություն. անոնց մեկը ծնավ Եգիպտոսի մեջ, իսկ մյուսը՝ Քաղղեայի» և ավելացնում է. «Առաջին առթիվ մենք պիտի ֆենեմք այս երկու մեծ կենտրոններու արվեստը և անոնցմե բխող շառավիղները»²⁰։

Թեկուզ վերջին այդ բառերից քննադատները պետք է հասկանալին, որ Եգիպտոսի և Քաղղեայի մասին խոստում տվողն իրենց հայրն է և ոչ թե Շուաղին, և որ հենց նույն գրքում իրենց հայրն արդեն գրել է և՛ Եգիպտոսի, և՛ Քաղղեայի ճարտարապետությունների մասին։

Դժբախտաբար այս հատվածի վերաբերյալ քննադատների կատարած դիտողությունը այսքանով չի վերջանում։

Բանն այն է, որ տվյալ հոդվածը սկսվում է ոչ իրենց ցույց տված 5-րդ էջով, այլ 3-րդով։ Նշանակում է հոդվածի սկզբի երկու և կես էջերը քննադատ ժառանգները բաժին են հանել Թ. Թորամանյանին, իսկ շարունակությունը վերագրել են Շուաղին։ Նրանց այդ «բարեհոգությունը» իրենց հոր նկատմամբ հասկանալի է դառնում, երբ հոդվածի առաջին մասի վերջում կարդում ենք. «Նույնպես հիշատակարաններով պիտի կաղմվի մեր ժողովրդի՝ հայության ալ իսկական պատմությունը»²¹։ Այստեղ արդեն ժառանգները հասկացել են, որ ֆրանսիացի Շուաղին չէ, որ հայ է ձևացել ու հայ ժողովրդի անունից խոսել, այլ Թորամանյանն է գրել այդ տողերը։ Այդ է պատճառը, որ նրանք հոդվածի սկզբի մասը թողնելով Թորամանյանի գրչին, շարունակությունը վերագրել են Շուաղին։

Հետաքրքիր է, որ նույն ժողովածուի 9 էջից սկսած ղետեղել ենք մի այլ հոդված, որ նույնպես ընդհանուր բնույթի է ու Հայաստանին չի վերաբերում և կրում է «Կրոնական տաճարներու զանազանությունները սկզբեն մինչև քրիստոնեություն» խորագիրը։

Այս մասում Թորամանյանը կատարել է իր տված խոստումը և գրել է Եգիպտական և քաղղեական ճարտարապետությունների և նրանցից առաջացած ճյուղավորումների՝ Հրեաստանի, Հունաստանի, Հռոմի ճարտարապետության մասին և այլն։ Գրախոսները այս հոդվածը այլևս չեն կարողացել վերագրել Շուաղին կամ մեկ ուրիշի, որովհետև նա թեև նախորդի անմիջական շարունակությունն է և չի վերաբերում Հայաստանին, բայց նրա մի քանի մա-

19 Թ. Թորամանյան, Նյութեր, Բ, էջ 9։

20 Նույն տեղում, էջ 9 (ընդգծումը մերն է—Կ. Ղ.)։

21 Նույն տեղում, էջ 5։

սերը վաղօրոք տպագրվել են «Հուշարար» տպրերականի 1907 թ. 3-րդ և 6-րդ համարների 39—42 և 90—93 էջերում, Թորամանյանի ստորագրությամբ:

Նույնն ասելու ենք Դիելի մասին: Նրա գրածը չէ, որ մենք վերագրել ենք Թորամանյանին, այլ Թորամանյանի գրածն է, որ ժառանգները վերագրել են Դիելին²²:

Քննադատները աշխատում են հսկել նաև Թորամանյանի լեզվի անաղարտության վրա և ցույց են տվել օրինակներ, որտեղ մենք, ելնելով ժամանակակից լեզվի օրենքներից, որոշ անհրաժեշտ փոփոխություններ ենք մտցրել և այդ մասին նշել մեր գրած առաջաբաններում: Այսպես, նրանք մեզ մեղադրում են, որ հաշս (գրք. յաշս) հայ կղերին դարձրել ենք հայ կղերի աշփում²³, Մի ալլ էջում էլ հաշս (յաշս) հայտնի փոխել ենք հայտնի աշփում: Այդ գրաբարյան ձևը վեր ենք ածել աշխարհաբարի, որովհետև նոր ուղղագրությամբ պարտավոր ենք դրել հաշս՝ յաշս-ի փոխարեն, որ նշանակում է կաղկանձներ. հաշր աչքի հետ կապելն անհնարին է: Մի ալլ տեղում Թորամանյանի հոգում (յորում) եվրոպան խաբխափում էր միություն մեջ նախադասությունը, որպեսզի չկարծեն, թե եվրոպան հորի մեջ էր խաբխափում. դարձրել ենք «Երբ եվրոպան խաբխափում էր միության մեջ», բայց այդ մասին էլ նշել ենք մեր գրած առաջաբանում²⁴:

Լեզվի հարցում ժառանգների դիտողությունների գլուխգործոցն այն է, որ նրանց կարծիքով Թորամանյանի կենդանության օրով արևելահայերենով տպագրված աշխատությունները պետք է վերածենք արևմտահայերենի՝ օգտագործելով Թորամանյանի արխիվում եղած ձեռագրերը: Թե ինչպիսի խառնաշփոթություն և աղավաղումներ կառաջանային դրանից, թողնում ենք ընթերցողների երևակայությանը, որովհետև ձեռագրերում պահված օրինակներն ու տպագիրներն իրարից զգալի կերպով տարբերվում են ոչ միայն լեզվով, այլև բովանդակությամբ: Մենք Թորամանյանի գործերը հրատարակել ենք այնպես, ինչպես ինքն է հրատարակել:

Մեզ մեղադրում են, որ Թորամանյանի սեփական մտքերը անկյունավոր փակագծերի մեջ ենք առել, որ խմբագրի՝ կողմնակի կերպով բնագրի մեջ մտցրած բառերին է հատկացված: Յույց են տվել Ա. Ժողովածուի 165, 251, 293, 238 և 275 էջերը (էջ 240):

Այստեղ ևս գրախոսները անուշադիր են և սխալ:

165 էջում մեջ է բերված Ապլղարիս մարզպանի շինած տոհմային դամբարանի կառուցման արձանագրությունը: Նրա հրատարակիչը արձանագրության մեջ բացակայող գրերն իր կողմից ավելացրել է և այդ ավելացրած գրերը առել է անկյունավոր փակագծերի մեջ, ինչպես օրինակ հա[յ]ոց, Գրիգորո[յ], քմ[մ]ե, կր[տ]սերութեան և այլն: Թորամանյանը նույնությամբ արտագրել է և մենք էլ ճշտությամբ վերարտագրել ենք: Հողվածադիրները շեն հասկացել, որ այդ փակագծերը վիճական արձանագրությանն են վերաբերում և կապ չունեն մեզ կամ Թորամանյանի հետ: Նույնը պետք է ասենք 275 էջում հանդես եկող անկյունավոր փակագծերի մասին: Այստեղ ևս Թորամանյանը մեջ է բերել

²² Տե՛ս նույն տեղում, էջ 25:

²³ Թ. Թորամանյան, Նյութեր, Ա, էջ 260, ա սյունակ, տող 2:

²⁴ Նույն տեղում, էջ X:

բոլորակ գազկաշեն տաճարի սակավաթիվ արձանագրություններից մեկը, որն ունի հետևյալ բովանդակությունը. «ՆԿԲ թվականին շրջակամար կա[ռուցաւ]»։ Կա-ից հետո մնացած գրերը տեղում չկան և հրատարակիչն ինքն է ավելացրել։ Այնպես որ այստեղ ևս այդ փակագծերը մերը կամ Թորամանյանինը չեն²⁵։ Սրանք պարզ և տարրական բաներ են։

Ժողովածուների մեջ տպագրված հոդվածները քննադատ ժառանգները, ինչպես արդեն ասել ենք, հաճախ համեմատել են մեզ համար անհայտ, ըստ երևույթին սևագիր ձեռագրերի հետ և մեզ մեղադրելու համար նշել են բոլոր տարբերությունները... սևագրություններից (էջ 242—244)։ Անգամ օրինակներ կան, երբ մի հոդվածի ձեռագիրը համեմատել են մեր տպագրած մի այլ հոդվածի հետ։ Ավելի արտառուց բան դժվար է երևակայել։

Թորամանյան ժառանգները գրում են, որ «Աղթամիրի նախնադարյան բերդի դիրքը և ձևը նկարագրելուց հետո Թորամանյանն ավելացնում է. «... բայց մնացորդներ ևս կան, որոնք XVI և XVII դարերուն կպատկանին»։ Էջատակի ծանոթության մեջ դրախտսները ցույց են տվել Ա ժողովածուի 33 էջը։ Այնուհետև քննադատներն ավելացնում են. «Թե որո՞նք էին այդ մնացորդները, ի՞նչ տեսակետներ կային նրանց ժամանակագրության մասին (ընդգծումը մերն է—Կ. Ղ.), և թե ինչո՞ւ էր Թորամանյանի կարծիքը տարբերվում նրանցից (ու՞մի՞ց—Կ. Ղ.), այլևս ոչինչ չենք կարողում ժողովածուում, որի հետևանքով հեղինակի վերոհիշյալ տեսակետը (ի՞նչ տեսակետ—Կ. Ղ.) մնացել է առանց ապացույցի» (էջ 235)։ Նրանք կարծում են, թե բնագիրը շարունակություն է ունեցել և մենք կրճատում ենք կատարել, Թորամանյանի միտքը թողնելով կիսատ։

Այստեղ ևս Թորամանյանին չեն հասկացել նրա քննադատ ժառանգները։ Թորամանյանի այդ աշխատությունը նախնադարյան հուշարձաններին է նվիրված։ Աղթամիրի հնագույն բերդները նկարագրելուց հետո նա ասում է. «Ամենահին նախաքրիստոնեական շրջանից մնացած բնակության մնացորդներ կգտնվին այստեղ. բայց մնացորդներ ևս կան, որոնք XVI և XVII դարերուն կը պատկանին»։ Դրանով էլ վերջացնում է Աղթամիրի նախնադարյան բերդի նկարագրությունը։

Դրախտսները ամեն առիթ օգտագործում են մեզ մեղադրելու համար, երբ անգամ պարզ է դառնում, որ եղածը տպագրական վրիպակ է։ Այսպես, օրինակ, Ա ժողովածուի 33 էջի սկզբին, տպագրության ընթացքում մի քանի գրեր էջի ծայրին թափվել են, գրաշարները վերաշարելու ժամանակ առաջին տողի ձախ բառը դրել են երկրորդի սկզբին, իսկ երկրորդ տողի բառը՝ առաջին տողի սկզբին։ Տպագրական այս պարզ վրիպակը, որ տեղ է գտել տպագրության մի մասում, առիթ է ծառայել քննադատների երկար ու բարակ դատողությունների։

Ժառանգները գրում են, որ Թորամանյանի «Անի քաղաք, թե՞ ամրոց» աշխատության միջից կրճատել ենք Դիրաբլարի եկեղեցուն վերաբերող երկու էջ, որի հետևանքով կտրվել է շարադրանքի տրամաբանական կապը, մոռացության են մատնվել Դիրաբլարի մասին Թորամանյանի հաղորդած մանրամասնությունները և թերի մնացել Անիի շուրջը գտնվող նախաքրիստոնեական

²⁵ Այդ արձանագրության վերծանությունը տե՛ս Հ ո վ ս ե փ Օ Ր Բ Ե Լ Ի, Անի քաղաք, Դիրվան հայ վիմագրության, պրակ Ը, էջ 42, արձ. 120, լուսանկարը՝ տախտակ III։

հուշարձանների լրիվ ցանկը (էջ 237—238)։ Թող իմանան գրախոսները, որ Լթե Անի քաղաքն իր շրջապատով վերցնելու լինենք Դիրաքլարի շրջագծով, այդ դեպքում հարյուրավոր կարևոր հուշարձաններ պակաս կլինեն նշված թ. Թորամանյանի հոգվածում և այն էլ ոչ մեր մեղքով։ Դիրաքլարը նույն հատորում, բայց իր տեղում, ներկայացված է շատ ավելի հիմնավոր աշխատությունը։

Գրախոսները նկատողության են արժանացրել մեր մի լրացումը, որով Թորամանյանի այն տեսակետը, թե հայկական ճարտարապետությունը «... ծաղկման վիճակի է հասնում XIII—XIV դարերում, որուն հաջորդում է վերջնական անկում...» (էջ 240), մենք աղավաղել ենք, վերջնական բառը հանելով և մեր կողմից ավելացնելով՝ «որին հաջորդում է Հայաստանի ինքնուրույն ճարտարապետության բուռն վերելքը սովետական կարգերի պայմաններում»²⁶։

Նթե գրախոսները բողոքեին միայն այն բանի համար, որ լրացումը անկյունավոր փակագծերի մեջ չի առնված, մենք համաձայն կլինեինք նրանց հետ, բայց նրանք դրանով չեն բավարարվել և բողոքել են լրացման դեմ ըստ էության, առարկելով, որ իբրև թե Թորամանյանի կենդանության օրով Հայաստանում դեռևս վերելք չկար։ Սա արդեն բացարձակ սխալ է։ Թորամանյանը վախճանվեց 1934 թ., իսկ այդ ժամանակ հայկական ճարտարապետությունը իրոք վերելք էր ապրում։ Թորամանյանն ինքը, Լկ. Թամանյանի, Ն. Բունիաթյանի և շատ ուրիշների կողքին մեծ խանդավառությամբ մասնակցում էր այդ վերելքին։ Թորամանյանն այնքան էր ոգևորվել, որ դուրս եկավ ճարտարապետության պատմաբանի իր սահմաններից և Երևան քաղաքը զեղեցկացնելու համար նախագիծ ներկայացրեց։

Վերջացնենք։ Մեկ հոգվածում հնարավոր չէ կանգ առնել շոշափված բոլոր հարցերի վրա։ Սակայն բերված օրինակներն էլ բավական են զաղափար կադմելու, թե ինչպիսի մակարդակ ունի ժառանգ-քննադատների գրախոսությունը։

* * *

Ինչպես սկզբում ասացինք, հրատարակված Լրկու հատորներում թերություններ չլինել չէին կարող։ Ինչքան էլ որ ուշադիր սրբազրված լինեին, սխալներն ու վրիպակները անխուսափելի էին։ Սակայն արժե՞ արդյոք առկա վրիպակների կողքին հորինել գոյություն չունեցող թերությունների մի ամբողջ շարան և այդ ինքնահնար նյութի հիման վրա «գրախոսական» գրել։ Գրախոսներից մեկը՝ Ն. Թորամանյանը «մոռացել է», որ իրենց տանը պահվող արխիվից իր հոր ձեռագրերն ինքն է մատակարարել մեզ և, իբրև Բ ժողովածուն կադմոզի օգնական, մեքենագրած օրինակներն ինքն է համեմատել ձեռագրերի հետ։ Նա մասնակցել է սրբազրական աշխատանքներին ևս, հետևապես ինչ-որ չափով ինքն էլ է պատասխանատու վրիպակների համար։

Սովորաբար գրախոսելով որևէ գիրք, քննադատը բացասական Լրկույթների կողքին նշում է նաև դրականները, դրում հրատարակված գրքի նշանակության մասին։

26 Թ. Թորամանյան, Նյութեր, Բ, էջ 109։

Թորամանյան ժառանգներն այդպես չեն վարվել, նրանք սկզբից մինչև վերջ դբաղվել են միայն խմբագրին մեղադրանքներ ներկայացնելով: Ահա թե ինչու ղարմանալի չէ, որ նրանք ըստ էության ոչ մի դրական խոսք չեն կարողացել ասել իրենց հոր գործերի երկու հատորների մասին:

Մի կողմ ենք թողնում գրախոսների՝ մեր նկատմամբ դրսևորած միտումնավոր վերաբերմունքը, ցավալին այստեղ այն է, որ նրանք, չկարողանալով լիովին հասկանալ Թ. Թորամանյանին, հավակնել են հանդես գալու քննադատի դերում և անտեղյակ ընթերցողին մոլորության մեջ գցելու պատճառ են դարձել: Թորամանյանին «պաշտպանելու» նպատակով գրված իրենց գրախոսականում նրանք ըստ էության մեղանշել են մեծ գիտնականի տեսակետների դեմ:

Թորամանյանի ժառանգները պետք է գիտենան, որ գիտությունը ժառանգաբար չի անցնում, այլ ձեռք է բերվում երկարատև տքնաջան աշխատանքի միջոցով: Միայն ժառանգ լինելու հանգամանքը բավական չէ հայկական ճարտարապետության պատմության բարդ հարցերն անսխալ քննության առնելու և այդ ուղղությամբ ուրիշների կատարած անշահախնդիր պատրաստակամությամբ և ինքնաբուխ նվիրումով գլուխ բերված և հեղինակավոր մասնագետների կողմից երախտագիտությամբ ընդունված գործը սևացնելու և մերժելու համար:

Մենք բախտ ենք ունեցել անցյալում մոտիկից ճանաչելու Թորոս Թորամանյանին, աշխատել ենք միևնույն հաստատության մեջ, մասնակցել ենք հնադիտական արշավների և միշտ հարդանքի զգացմունքով ենք մոտեցիլ նրան:

Եվ հասկանալի է, որ ժառանգների գրախոսականը մաղաչափ անգամ չի ազդելու այն անհուն սիրո և համակրանքի վրա, որ ունեցել ենք և այժմ էլ ունենք Թ. Թորամանյանի՝ այդ պարզ ու շիտակ մարդու և մեծ գիտնականի անձի նկատմամբ:

Վերջում կցանկանայինք երկու հարց տալ «Բանբեր Հայաստանի արխիվների» խմբագրությանը:

1. Արդյոք լավ չէ՞ր լինի, եթե խմբագրությունը շտպագրեր ապակողմնորոշող այդ գրախոսականը թեկուղ միայն այն նկատառումով, որ ճարտարապետության պատմության խնդիրները չեն մտնում Հայաստանի արխիվների վարչության լուծմանը ենթակա հարցերի շրջանակի մեջ:

2. Արդյոք խմբագրությունը զգացե՞լ է, թե ինչպես ինքն իրեն դրել է անհարմար վիճակում, երբ ուսուցողական տոնով պնդում է, որ անվանի գիտնականների ձեռագիր ժառանգությունը հրատարակելիս պետք է «պատշաճ պահանջկոտություն» ցուցաբերել հանգուցյալների «ձեռագիր-բնագրերի նկատմամբ» («Բանբեր», էջ 246):

Մենք մինչև հիմա կարծում էինք, թե անհրաժեշտ է պահանջկոտ լինել նախ և առաջ հրատարակիչների նկատմամբ, բանից պարզվում է, որ պահանջկոտություն պետք է հանդես բերել հանգուցյալների ձեռագիր-բնագրերի նկատմամբ: Խմբագրությունը իսկապես լրջորեն պնդո՞ւմ է իր այդ անհասկանալի տեսակետը:

ПО ПОВОДУ ОДНОЙ ЗАПОЗДАЛОЙ И ТЕНДЕНЦИОЗНОЙ РЕЦЕНЗИИ

Проф. К. Г. КАФАДАРЯН

(Резюме)

По поручению Армянского филиала Академии наук СССР мы составили два сборника сочинений архитектора Тороса Тораманяна, которые вышли в свет в 1942 и 1948 гг.*

В прошлом году, спустя десятки лет, в журнале «Вестник архивов Армении» была напечатана статья Н. Тораманян и Г. Тораманяна, в которой авторы подвергли резкой критике составителя сборников. Они пишут, что мы якобы своим неуместным вмешательством исказили подлинники и даже приписали Тораманяну чужие работы.

В статье, основываясь на фактическом материале, мы показываем ошибочность замечаний критиков и беспочвенность их обвинений.

Кстати, нас удивляет то обстоятельство, что вопросами истории архитектуры занимаются не специализированные научные журналы, а «Вестник архивов Армении».

* Թ. Թորամանյան, նյութեր հայկական ճարտարապետության պատմության. աշխատությունների ժողովածու, կազմեց և հրատարակության պատրաստեց ավագ դիտ. աշխատող Կարո Ղաֆադարյան, ընդհանուր խմբագրությամբ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու, Երևան, 1942, XXXV+403 էջ: Նույնի՝ նյութեր հայկական ճարտարապետության պատմության. աշխատությունների երկրորդ ժողովածու, կազմեց և խմբագրեց Կ. Ղաֆադարյան, աշխատակցությամբ Ն. Թորամանյանի, Երևան, 1948, XIII+307 էջ: